Հաստատված է
ԳՊՀ գիտական խորհրդի 2007թ.
հոկտեմբերի 15-ի թիվ 1 նիստում
Ռեկտոր Ռ. Խ. Հակոբյան
«15» հոկտեմբերի 2007թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԼԻՆԻԿԱՅԻ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ություն

I. Ընդհանուր դրույթներ

1. Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան (այսուհետ՝ Կլինիկա) Գավառի պետական համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումն է՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող ուսումնական-խորհրդատվական կառույց:
2. Կլինիկան գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ միջազգային պայմանագրերի, ՀՀ գործող օրենսդրության, Գավառի պետական համալսարանի և սույն կանոնադրություններին համապատասխան:
3. Կլինիկայի գործունեության սկզբունքներն են՝
   1) օրինականություն,
   2) մարդասիրություն,
   3) մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանություն,
   4) իրավաբանական խորհրդատվության մատչելիություն և անհատուցելիություն,
   5) կամավորություն,
   6) օբյեկտիվություն,
   7) այլ կառույցների հետ համագործակցություն,
   8) ստացված տեղեկության գաղտնիություն,
   9) բարեվարքության կանոնների պահպանում:
4. Կլինիկան գործում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի տարածքում:
5. Կլինիկան կարող է համագործակցել այլ իրավաբանական կլինիկաների, հասարակական կազմակերպությունների, իրավապաշտպան կառույցների հետ:

6. Կլինիկայի հիմնական աշխատանքային լեզուն հայերենն է, իսկ ըստ անհրաժեշտության կարող է կիրառվել նաև անգլերենը, ռուսերենը:
7. Կլինիկան գործում է Գավառի պետական համալսարանի կազմում, ունի իր անվամբ հայերեն, անգլերեն և ռուսերեն լեզուներով կլոր կնիք, պաշտոնաթղթեր, հաշվարկային հաշիվներ բանկերում ինչպես դրամով, այպես էլ տարադրամով:
8. Կազմակերպության անվանումն է՝
Հայերեն՝ «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի Իրավաբանական կլինիկա:
Ռուսերեն՝ Юридическая Клиника фонда “Гаварский Государственный Университ”.
Անգլերեն՝ “Gavar State University” foundation Legal Clinic.
9. Կլինիկայի գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1, հեռախոս: +374 60 461264:

II. **Իրավաբանական կլինիկայի նպատակները և խնդիրները**

10. Կլինիկայի նպատակներն են՝
    1) օժանդակել ՀՀ Գեղարքունիքի մարզում մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը;
    2) նպաստել ՀՀ-ում կանանց, երեխաների, փախստականների և սոցիալապես անապահով անձանց իրավունքների պաշտպանությանը,
    3) նպաստել հասարակության իրավագիտակցության աստիճանի բարձրացմանը:
11. Կլինիկայի խնդիրներն են՝
    1) նպաստել իրավաբանական կլինիկայի ուսանողների գործնական հմտությունների զարգացմանը;
    2) անվճար խորհրդատվություն մատուցել կանանց և երեխաներին;
    3) աջակցել սոցիալապես անապահով ընտանիքների անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը,
12. Իրավաբանական օգնություն ցուցաբերելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը կրում է հաճախորդը, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրում:

III. **Իրավաբանական կլինիկայի գործունեությունը**

13. Կլինիկայի գործունեության հիմնական ուղղություններն են.
    1) կանանց և երեխաների իրավունքների և ազատությունների ուսումնա-սիրությունը և ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ ուսուցումը,
    2) կանանց և երեխաների իրավունքների վերաբերյալ անվճար իրավաբանական խորհրդատվության մատուցումը,
    3) կանանց և երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը,
    4) կանանց, երեխաների, փախստականների և սոցիալապես անապահով անձանց իրենց իրավունքների մասին իրազեկումը՝ այդ նպատակով կազմակերպելով քննարկումներ, հանդիպումներ, վերապատրաստման դասընթացներ, սեմինարներ:
14. Կլինիկայի գործունեության հիմնական ձևերն են՝
    1) ինտերակտիվ մեթոդներով աշխատանք փոքր խմբերում,

2) կանանց, երեխաների, փախստականների և հասարակության սոցիալապես անապահով անդամների /այլ հաճախորդների/ ընդունելության կազմակերպում,

3) կանանց, երեխաների և այլ հաճախորդների հետ հարցազրույցի անցկացում, հիմնախնդրի գրանցում,

4) նրանց անվճար իրավաբանական խորհրդատվության մատուցում,

5) կանանց, երեխաների և այլ հաճախորդների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցների ձեռնարկում, նրանց շահերի ներկայացում իրավապահ մարմիններում:

15. Կլինիկան իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների ու կազմակերպությունների, այնպես էլ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների և անձանց հետ:

16. Կլինիկան իր կանոնադրությամբ նախատեսված նպատակներն ու խնդիրներն իրականացնելիս օրենքով սահմանված կարգով իրավունք ունի լուսաբանելու և տեղեկատվություն տարածելու իր գործունեության մասին:

17. Կլինիկան իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Գավառի պետական համալսարանի և սույն կանոնադրություններով չարգելված այլ գործունեություն:

18. Կլինիկայի գործունեությունն ապահովող պարտադիր փաստաթղթերն են՝

1) Կլինիկայի «Աշխատանքային կանոնագիրքը»:

2) Կլինիկայի «Վարքի կանոնագիրքը»:

3) «Հաճախորդների ընդունելության և խորհրդատվության մատուցման մասին» Կլինիկայի կանոնակարգը:

19. Կլինիկայի անդամներն առաջնորդվում են Կլինիկայի Աշխատանքային ներքին կանոնակարգով, որը սահմանում է աշխատանքային օրվա ռեժիմը, աշխատանքի հերթափոխության կարգը, հանգստյան օրերի և արձակուրդների ժամանակացույցը, Կլինիկայի գործունեության հետ կապված այլ հարցեր:

20. Աշխատանքի վարձատրության չափը, հերթական արձակուրդի տևողությունը չի կարող պակաս լինել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն չափից:

IV. **Իրավաբանական կլինիկայի կառուցվածքը**

21. Կլինիկայի գործունեությունն իրականացնում է Կլինիկայի աշխատակազմը՝

1) Կլինիկայի տնօրենը,

2) Կլինիկայի համակարգողը,

3) Կլինիկայի դասախոսները,

4) Կլինիկայի կամավոր աշխատակիցները,

5) Կլինիկայի ուսանողները:

22. Կլինիկայի գործունեությունն անմիջականորեն ղեկավարում է տնօրենը, որը նշանակվում է ԳՊՀ-ի ռեկտորի հրամանով: Կլինիկայի տնօրենի աշխատանքը համարվում է գիտամանկավարժական աշխատանք:
23. Կլինիկայի ուսանողները ընտրվում են Կլինիկայի աշխատակազմի կողմից՝ թեստավորման և հարցազրույցի միջոցով: Մասնակցում են Կլինիկայի գործունեությանը 1,5 տարի ժամանակով (երեք ուսումնական կիսամյակ) և նրանց կողմից կատարվող աշխատանքները նկարագրվում են Կլինիկայի «Աշխատանքային», «Վարքի» և «Հաճախորդների ընդունելության և խորհրդատվության մատուցման» կանոնակարգերով:
24. Կլինիկայի ուսանողների ուսուցումը կազմակերպվում է ԳՊՀ-ի իրավաբանական բաժնի ուսումնական ծրագրով նախատեսված հիմնական դասընթացներից ազատ ժամանակ:
25. Կլինիկայում դասընթացները և հաճախորդների ընդունելությունն իրականացվում են Կլինիկայի գրասենյակում: ԳՊՀ-ի ռեկտորի թույլտվությամբ կարող են օգտագործվել նաև այլ ազատ լսարաններ և տարածքներ:
26. Հաճախորդների ընդունելության, ինչպես նաև Կլինիկայում ուսանողների հերթապահության ժամանակացույցը կազմում է Կլինիկայի տնօրենը՝ համաձայնեցնելով համակարգողի և դասախոսների հետ:

V. **Իրավաբանական կլինիկայի ներքին գործավարության փաստաթղթերը**

27. Կլինիկայի գործունեությունը կարգավորող փաստաթղթերն են՝
    1) Կլինիկայի Կանոնադրությունը
    2) Կլինիկայի Աշխատանքային կանոնագիրքը
    3) Կլինիկայի Վարքի կանոնագիրքը
    4) Հաճախորդների ընդունելության և խորհրդատվության մատուցման կանոնակարգը:
28. Կլինիկայի ներքին գործավարության փաստաթղթերն են՝
    1) հաճախորդի դիմումը,
    2) հաճախորդի հետ պայմանագիրը,
    3) հաճախորդի հաշվառման քարտը,
    4) ընդունված գործերի գրանցամատյանը,
    5) Կլինիկայում փաստաթղթերի մուտքագրման և ելքագրման մատյանները,
    6) Կլինիկայի կողմից սահմանված անհրաժեշտ այլ փաստաթղթեր:
29. Կլինիկայի ներքին գործավարության բոլոր փաստաթղթերի ձևերը հաստատում է Կլինիկայի տնօրենը:
30. Կլինիկայի ներքին գործավարության փաստաթղթերը գրանցում և հաշվառում է համակարգողը, որը ուսանողներին ծանոթացնում է Կլինիկայի ներքին գործավարության բոլոր փաստաթղթերին և նշված ձևաթղթերը լրացնելու կարգին:

31. Կլինիկայում չեն կարող պահվել մուտք եղած փաստաթղթերի բնօրինակները: Հաճախորդի ներկայացրած փաստաթղթերը գրանցվում են ընդունված գործերի գրանցամատյանում և ամրակցվում (կարվում) են գործի թղթապանակին: Մուտք եղած փաստաթղթերի բնօրինակների կորստի կամ փչանալու դեպքում պատասխանատվությունը կրում է այն ուսանողը, որն այդ փաստաթուղթն ընդունել է սույն կետի պայմանների խախտմամբ:

32. Կլինիկայի ուսումնական ծրագիրը մշակվում է Կլինիկայի աշխատակազմի կողմից և հաստատվում ԳՊՀ-ի ռեկտորի կողմից: Կլինիկայում ուսուցանվող դասընթացների ծրագրերը մշակվում են դասախոսների կողմից և հաստատվում ԳՊՀ-ի ռեկտորի կողմից:

VI. **Իրավաբանական կլինիկայի սեփականությունը**

33. Կլինիկայի սեփականությունը գոյանում է Համալսարանի կողմից կլինիկային տրամադրած գույքից, դրամաշնորհներից, ստացվող նվիրատվություններից, օրենքով սահմանված կարգով իրականացված գործունեությունից և օրենքով չարգելված այլ, այդ թվում՝ օտարերկրյա աղբյուրներից:

34. Կլինիկայի հիմնադիրների և անդամների կողմից Կլինիկային հանձնած, ինչպես նաև այլ աղբյուրներից ստացված գույքը Համալսարանի սեփականությունն է:

35. Կլինիկան իրեն պատկանող գույքը տիրապետում, օգտագործում և տնօրինում է իր Կանոնակարգով սահմանված նպատակների ու խնդիրների իրականացման համար և այդ նպատակներին համապատասխան՝ օրենքով և իր կանոնակարգով սահմանված կարգով:

VII. **Եզրափակիչ դրույթներ**

36. Կլինիկայի աշխատակիցների՝ քաղաքացիաիրավական պայմանագրից ծագող հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Կլինիկայի Աշխատանքային կանոնակարգով:

37. Կլինիկայի աշխատակազմը և ուսանողները, որոնք թույլ կտան սույն կանոնադրության պահանջների խախտում, ենթակա են կարգապահական պատասխանատվության՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

38. Համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ սույն կանոնադրության հաստատումից հետո ուժը կորցրած ճանաչել Իրավաբանական կլինիկայի 10 դեկտեմբերի 2003թ. Կանոնադրությունը: